ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ՀՀ ԷԵԲՊՆ ջրային կոմիտեի «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԵԲՊՆՋԿ-Ջ-ՀՄԱԱՊՁԲ-19/23 ծածկագրով հրատապ մեկ անձ գնման ընթացակարգով ճնշման վերացման փականների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան 07 հունիսի 2019թ.

ժամը. 12:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ՝	**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)
Անդամներ՝	**Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ա. Գևորգյան (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)
	Ն. Համբարձումյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
	Բ. Եդիգարյան (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)
Հանձնաժողովի քարտուղար	**Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀմ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող)

1. Գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգի մասին

(Ս. Մելքոնյան)

1. Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝
2. Հայտերի գնահատման մասին:
3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

2. Հայտերի գնահատման մասին

(Ս. Մելքոնյան)

Ընդունել ի գիտություն՝

Հրավերով սահմանված կարգով, 2019 թվականի հունիսի 6-ին էլ.փոստի միջոցով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակցին՝ «Ինվեստ Բիզնես» ՍՊԸ-ին, ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

2.1 Հայտերի գնահատման մասին:

Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը և անհամապատասխանություններ չհայտնաբերեց:

Գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի հայտ գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

2.2 Առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ:

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝ 2-րդ չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Ինվեստ Բիզնես» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

2.3 Բանակցությունների վարման մասին:

Քանի որ մասնակցի առաջարկած գները 1-ին չափաբաժնի մասով գերազանցում է գնման հայտով նախատեսված նախահաշվային գները, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցին հրավիրել բանակցությունների:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

3. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին:

(Ս. Մելքոնյան)

Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1. Հարցում ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:
2. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել բանակցությունների վարման մասին ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երկրորդ աշխատանքային օրվա ժամը 11:00, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 5, դեմ- 0

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ս. Մելքոնյան

Անդամներ՝ _____ Ա. Ջալադյան

_____ Ա. Գևորգյան

_____ Ն. Համբարձումյան

_____ Բ. Եդիգարյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ն. Նիկոլայան